Armenian Holy Church of Nazare
2, ARMENIAN STREET
CALCUTTA

LIBRARY & RECORD ROOM

Presented by M. G. Sett

Reference No. 500

Register Folio No. 15

1939

891.99
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961

# ԹՈՒԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ

ՆՈՒԻՐԵԱԼ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳԻ
ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՊԱՐՈՆ

ԳԱԲՐԻԷԼԻ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ

Ի ՌԱՆԳՈՒՆ

ՀԱՐՍԱՆԷԲԱԺԻՆ

ՊԱՐՈՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՈՐԴՒՈՅ ԻՒՐՈՅ ԸՆԴ
ՕՐԻՈՐԴ ՀՌԻՓՍԻՄԷ Յ. Մ. ԴԱՒԹԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Ի ԿԱԼԿԱԹԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1847

ՀԱՍՌ ԳԱ

# Ա Զ Դ

ՑԵՂԱՆԵԼ իմում ՚ի Հնդկաց յամի Տեառն 1830. Եարցի ընդէմ յաշխարհն Հայրենեաց՝ զՊապ-կայ մի և զԹուղթակ աւ ՚ի զՏօսանս իմ. որոշեցաւ երկուքին և Երամակնի էին Երկրաւոյ Տարդկան. Պարսկայն ոխերայրեաց որ երգեր մեզ զԱրայն Գեղեցիկ և զապաւոածս Հայրենեաց իմոց, մեռաւ և Տափնե-ցաւ ի խարոյկս Դագաղաց, ըստ որում համարեցաւ Թէ Հնդիկ էր յազգէ Բրամանաց. Անայ ՚ի մխիթարութիւն իւյ մնաց այս Թուղթակ, որ այն իւր դեռ յազգ անձե-ռաւր ՚ի ձեռանաց Արծուոյ Տաղապարած ապրեալ՝ մեզ կրեր զերկիւղ մահու ՚ի սրտի իւրում. ուսոյց և հա-մարձակ խօսել ո՛չ կարէր. Զանազան ուսուցանել նմա երգս ազգի ազգիս, Եայց Եթէ երգ՝ նորա անախորժ ու-մէ Թուիցին. այն իմ էն մեզ, ո՛չ նորա. Այլն՝ պար-տաւորիր Հայերէնախօս Թուղթակիս, Թո՛ղ ՚ի մէջ աա-ցէ, զի ազատն Պաղամեոյ չեզելաց՝ ըստ Փիլոնի իմաստակիր Եբրայեցւոյ՝ ո՛չ կարէր աւելի ասել, քան Թէ "*ախորժ աշխատանացս*."

—Յամ Տեառն 1838. Հասեալ 'ի Քաղաքն Կոս-տանդնուպօլի՝ օր առաջի 'ի Սմբուլլի Խան, որ եղա-նակին անձրևոտ, օտարութեանն խորին, և ներքին փխրու-թեան ոգւոյ իմոյ վհատէին զիս արդեօք, եթէ չէր լեալ ընդ իս այս թուղթս. գոնէ երախտեաց երգով այսուիկ զբաղեցուցանել և ամոքել զմիտս։

—Գոհանամ զԱրարիչն իմ և զՏէրն մեր յիւր հա-մանուն՝ ուստի չարդ ալ 'ի,—Եթայց զԱէրն Վերիպեալ 'ի վաղուց ևս գիտէր. որ մանկամայն առեալ՝ անարա-տ և ընչին որպէս և էնն, փախեան առաջի Հօր Զուարճացելոյ 'ի Հարաւնիս Որդւոյ Իւրոյ Սիրելւոյ նուագեալ՝ և գրեթէ առաջին հանդիպայեալ 'ի ծիւն մեռուս, յորդւոյ առ Հայր այսօրինակ ընծայաբերու-թեան յառուրս ուրախութեան որպէս իւրեանց՝ յանդգա ծնայ և ծնանայ իմ թուղթ. զհէփ ուրեմն յարմա-րեալ և զաւուրն պատշաճին՝ յուրախութիւն և յօրհնութիւն Աստուածածնոյն Ամուսնոյ՝ պատիւ ան-ցին համարի՞ս մեղ։

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

# ԹՈՒԹԱԿ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

## ՀԱՅԿ 'Ի ՏԵՍԻԼ ՀԱՅԿԱԶՆԻՆ

Որ ՀՈԼՈՎԻ հինգերորդ .
Ցոր. ես պանդուխտ 'ի Պօլիս ,
Սմբուլ 'ի վան անծանօթ ,
Վաստակաբեկ կամ յոլիս ։

Դառն 'ի կսկիծ և մրմռունջ ,
Ձէտ բալասան կայծահար .
Ցրտասառոյց ողջոյն խոնջ ,
Ջեղում յանձնէ վէտ 'ի վայր ։

Ուր ինձ եթեր մառայլուտ,
Քօղէ զերես քաղաքիս.
Իբրեւ զկոյս խայծ յամօթ՝
Յաչաց հանէ պանդխտիս,

Պարսիկ անգամ կասկածոտ,
Յայտ չեղանէր ի կարծիս.
Աճապարել ի թաքուստ
Զիւր առարկայ սիրոյ Դից։

Օ՜հ յուսամ անօգուտ,
Քաղցր ի գոլով գալ առ իս,
Որում զտայ անհաղորդ,
Թէ ի չարիս՝ թէ բարիս։

Թէ Մայր կորոյս զիւրն գութ։
Խորոխտ ի խէթ հայել յիս,
Ակնունիցեմ մօրուն խորդ,
’ի գիրգ օտար գգուել զիս։

Մ՚ինչ ի խորհին յայս խորհուրդ
Ծփիմ որպէս լաստ յալիս.
Ամպք տեղային տարափ յորդ,
Զկուրութիւն լալ բաղտիս։

Պատկերացաւ Հէգ մտաց
Թանգ Մեսրովբայ Թաղիադեանց
Որ 'ի ծնանիլ զմարդ յաշխարհ ,
Ծնաւ ինքնին առ ԱՍՏՈՒԱԾ ։

Վեհ զուարթնոց էր ուսիլ ,
Հղարշ զերբեալ նրբաթել .
Այլ 'ի մե զոյշ աչացն՝ մ՛ն .
դեռ մարգարիտս անձրեւէր ։

“ Օ լի՛՞ չ ասեմ,“ Թա՛նգ , մտացա՞ն
Ըզգեզ՝ ազդ քո Հրճուանիք ,
Բայց կայ՝ որ լայ ընդ անուան
Քոյ , և տօնէ զարժանիք ։

Մինչ գիր Եղբօր , որ հեռին
Լուր 'ի բերան մեռար դու .
Խնայեցէ դէթ ըստ° հարկին ,
Ջանմահ յիշել անուն քոյ ։

Մինչ սիրասունք երեքին ,
Ոյց յիշատակ 'ի բերան .
Եւ սէր անմեղ 'ի սրտին՝
Արծարծէին յարաժամ ,

Մ՝ինչ քո կուսան սիրելիք .
Զորս իբր անգին մատանիք ,
Գողտրիկ կրծոյ ունէիր ,
Ցվերջին քո շնչել սիք՝

“Մ՝ոռացմո՛ն ,—թո՛ղ մոռասցին.
Զի երեսաց բարեկամք՝
Ըղձէր իւրեանց յաչս ունին ,
Չի՛ք ’ի սիրտն խանդաղանք ։

Ա՞յսպիսի քո՛ ընտանիք .—
Սակայն փեսայդ ապերջան ,
’Ի գալն յաշխարհ տատանդիկ՝
Ձեռն ’ի քնար հեծութեան ։

Ուսոյց տնկոց գարնանի ,
Ըզքեղ ’ի խէժ արտասուել .
Ցաշնան՝ զմահդ ապետալի ,
Տերեւաթափ աշխարհել ,

Հո՛րց ցըրշուշան ցայն պայծառ ,
Որ ՚մենաւոր ’ի Մասիս ,
Զիա՛րդ ըզքոյդ տայ տիպար ,
Ցորժամ հնչէ ցուրտ հիւսիս ։

Խոր 'ի ներքուստ մացառաց ,
Զպարկեշտուհւոյդ յիշատակ ,
Ուսաւ յերեսն ամօթխած ,
Զինչ նկարել Մանիշակ ։

Մահն է վճիռ մահացուաց ,
Այլ երանի էր անձին ,
Թէ քո նման՝ յոյս յԱստուած ,
Եւ սիրտ 'ի սէր փրկողին ։

Յուղ անդարձ հասարակաց ,
ընթանայի կամովին ,
ընդ քեզ օրհնել միշտ զԱՍՏՈՒԱԾ
ցերանելեաց խորանին ։"

Սուեր սիրոյն ժմռայեալ ,
Զեռամբացի ազգ արար .
Որպէս թէ կա՛ց , զի դեռ քոյ
պայման կենաց չէ լցեալ ։

Եւ զէտ ոգի զուարթուն ,
հեծեալ 'ի մեղմ սիւգ օդոյն ,
գնա՛ց , գնա՛ց , վերացա՛ւ
ցԱնկարելեաց բարձրութիւն ։

Ես հնացի մնաւոր ․
Սոյզ վարանաց ՚ի վիհ խոր ․
Ուր ինձ այլ լոյս չըմընայ ,
Բայց թէ Խորհուրդ և ԱՍՏՈՒԱԾ ։

Ընդ և գիշեր նախաստեղծ
Որ կայնշոյլ ՚ի սանդարս ,
Յապանասեան գահ ՚ի գեղձ՝
Ծալէր ըզշունչ ՚ի ծրարս ,

Հիքոյս ՚ի սանիջ աղեսից ․
Գթով եղեալ կարեկից ,
Ապապարէ Երազոց ․
Զի յեւեկս անրջոց ,

Հանցեն ուշոյ ՚ի վարան ,
Զնորանոր տեսարան ․
Զի գէթ զհոգոց ծանրութիւն ,
Պատարեսցեն ՚ի ցնդելն ։

Մ՝ահու արեան քուն հաղորդ
Թևս ՚ի թաթին թևէ մօտ ․
Ցիւր մեկոնեան ըմպելիս ,
Թողեալ թմբիր ՚ի հոգիս ։

Ո՜վ որ ընդ ցուրտ և ընդ տօթ ,
Չանի զուգին բազմատանջ՝
Այսօր Մորփեան ՚ի կացուրդ ,
Չանդեայց յերազ հիասքանչ .

Թափառակա՛ն դու պանդուխտ ,
Չէ՞ քո բոլոր կեանք երազ ,
Ե՞րբ եթող քեզ բաղդ յողդողդ ,
Զօր տեսանել անձկաս :

Ըստ ինձ յանկարծ Մորփեանն օթ
Լուսոյն վառեալ ՚ի ճաճանչ ,
Ցաջ և յաճախ ցնդեաց մութ
Ու քնէիցըն յօրան :

Օդոյն բացաւ վերնոլորտ ,
Զեղան զարմանք դուրս անդուստ
Բարբէ և զի՞նչ երևան ,
Լուսարփենից հան Երամ :

Ստուեր Անմահ Սկայի ,
Որ Աստուծոց բարձակից .
Ինձ ՚ի տեսիլ երևի՝
Ընդ ուրուական խմբի դից :

Յ'ոյժ Որմզդի դերադօր ,
Ցեց յաղեղն իւր լայնալիճ .
ԶԱկայ ունէր, առաւթուր ,
Որ մերթ երկրի սասանիչ :

Ձայն յառաջուստ քարոզէր՝
ՀԱՅԿԱ՛Յ է այս երեւոյթ .
Որ ստորակեաց դարին բէլ ,
Զաստուածափառն զ՚ներբրալթ .

Ա՛ՆԴ ուր Մասիս յամպն ի վեր՝
Գլուխ ամբառնայ ձիւնահեր ;
Եւ երփնէ վարս ի նարօտ
Ոսկեծղին առաւօտ :

Ինձ Տիտանեանն՝ այս ստուեր ,
Թուիմ՝ հսկի կալ ընթեր .
Ցորժամ՝ ի պսակ ծարաւոյ ,
Պեղէի ինձ գուբ ջրոյ :

" Ո՜ն դու մանուկ ի վաստակ ,
Ծանխեա ," ասէ "քո հասակ ,
Գուբ պեղել քեզ վշտագնի ,
Ցայգ անապատ անջրդի :

Թողեալ զջուր կենդանի ,
Որ կեանս տայ աշխարհի .
պեղեցէք ոք զաղտապխտին ,
՚ի զով լինքեան՝ զայդ գետին ։”

Յես զամ՝ ՚ի մէջ երազոյն ,
ՏԱրհին խօսիմ դիւցազուն
“ Ընմա՛հ Սառուե՛ր քաջարանց ,
Թէ մարդ իցես՝ թէ աստուած ,

Ասա՛ ընդէ՞ր ՏէՐ երկրիս ,
Փոյթ չտանի աղետիս ,
Ժառանգութիւն իւր լքեալ ,
Բա՛ մոռանա՞յ մինչ ՚ի սպառ ,

Օ երկիր ա՛յսքան արգաւանդ ,
Է՞ր կիզուցու յաւէտ անդ .
Ջո՛ւրցըն ՚ի մեր դաշտորայ ,
Խընայելով գետորայ ։

Ուստի զայրուտ Արփւոյն տապ ,
Դընէ զաշխարհ ՚ի տապնապ՝
Եւ զարարածս համօրէն
Սաստիկ կիզու միջօրէն ։

Ո՞ւր տապահարըն մըշակ
Լեզու պասքեալ 'ի պապակ ,
Թողու յանդէ ըզգութան ,
Առ ջուր դիմել զովութեան ;

Եգինք 'ի հերկ և 'ի տօթ·
Ցօղի եղեալ ապաստան ,
Ժամէական քաղցր արօտ
'Ի ծարաւս անդ մռամռան ;

Թուփք ներևան , աստ և անդ
Մացառ փշուտ դժնկան .
Յըցին երկրիս 'ի մարմանդ ,
Մեզ ընդ ճառոյ բազմօտեան ,"

ՀԱՅԿ 'ի տեսիլ հայկազնին
Դարձուցանէ զարմանին .
"Ո՞ւր էր Ադին փափկութեան ,
Ձայն թողի ձեզ՝ Հայաստան ;

Ուր յիշատակն երախտեաց
Հաւուն իմոյ եւ Աստուած .
Ձայն 'ի նորա երախտիս՝
Անուանեցի ձեզ՝ Մասիս ,

Ընդ՝ ուր չքնաղ ծիածան
Նշան եղաւ հաշտութեան .
Որդւոց Հայկայ ՚ի բաժին
Ժառանգութեանց հան երկին ։

Ուր առաջին էր այգին
Ուրախարար բաժակին ,
Զայն թողի ձեզ գուն ՚ի գուճ ,
Ըղձօսարան վայելուչ ։

Եւ ո՜ւր Ադին փափկութեան
Յոր ծայրն եղաւ մանկութեան ։
Ո՞ւր են վայրքն անքնին
Նորա անմեղ վիճակին ։

Ո՞ւր այն սեղանսրբութեան ,
Զոր նախ յորդւոց Հայաստան .
Հաշտել զՏէր ՚ի նուէր ,
Զհերկ և հունձ մեր օրհնել ։

Ընհեռ եղև մինչ խապառ ։
Արմենակայն սուրբ Ընտառ ,
Ո՛ր ՚ի սօսեան հովանիս ,
Գիտաց նատեալ աշխարհիս ,

Ո՜ն յաստեղունս, ո՜ն յարև,
Ո՜ն ’ի ծաղիկ, ո՜ն տերև,
Իսկ սա ’ի սեռ և տեսակ
Զողայն կրթէր ժամանակ ։

Ընդ ո՛ր ’ի վեհ խորանդունդ,
Յումպ մի եկուլ հողագունս,
Քառավտակ գետորայ,
Որ զդրախտն Ադինայ

Պե՛րճ ’ի շուշան վառվառուն,
Քաղցր ’ի պտուղ պարարուն,
Յօրինէին ’ի նախանձ,
Լուսափայլին աստեղաց ։

Եւ ’ի պողոցն անուշակ,
Զանմահարար օշարակ,
Քամեալ յոգի Մահացուին,
Աստուած անմահ առնէին ։’’

Ըստ ծովացան արտասուք,
Ընդ հին աւուրց հայոց շուք .
Հեկեկալով՝ Դիւցազին,
Զայս արարի դարձ բանին ,

"Բա՛ մեզ հասին և կորեան
Վայելքն աւուրց մշտերան .
Որ առ պապաքիս պապակեալ ,
Տապաստ դնիմ ողեսպառ .

Այլ զինչ իցեն այսուքիկ ,
Դառն յաւելման և չարիք .
Ցորժամ յերեկ դէպ լինէր ,
Ինձ պատահար անըմբեր :

Տեսանէի , բա՛ջ արանց ,
Ցեմնակ մեհեիս ՚ի լերանց՝
Հովիւ , որ զիւր ծարաւուտ
Վարէր ՚ի վեր կոյսըն հօտ :

Ոչխարանին նքողեալ ,
Ցոչորք ՚ի սապ ողեսպառ .
Ջառապարիդ զկխով ,
Թօթափեցան քո՛վ ՚ի քո՛վ .

Գառանց անմեղ երամակ՝
Դալար սիզոց փոխանակ .
Լիզոյր էր խուր ՚ի անուանդ ,
Ջարևակէզ քարակոյտ :

Մ՝այ 'ի բերան մատաղ ուլ
Զխուր լմլմէր պտուկ մօր ,
Այլ պարարիչ ընդ կաթին ,
Զոգի քամէր ծնողին ։

Հէհ ո՛ւհ տեսիլ աղետիս ,
Յուշոյ ողջոյն տարաւ զիս .
Եւ զե՛նչ հովիւն անդ տրտում ,
Յարկածն առնէր անողորմ ։

Ընդո՛ստ լերին թափ 'ի ծայր ,
Դիմէր զնել մորդ զալար .
ԶԱդրիական ծովափամբք՝
Արօտ տեսեալ լի ծաղկամբք ։

Ուր ե Հայցի բազմաստեան ,
Յական աղբեր մենական .
Ընդըր Ճեպեաց շուտափոյթ .
Զհօտըն վարել ծարաւուտ ։

Ըկանակեա ջուրք աղբեր ,
Պա՛պակ նոցին զիջանէր .
Կեա՛նք 'ի բնին՝ որ խխթայր ,
Ա՛ստ անվրդով՝ մխիթար ։

Ընդ հովանեաւ հացենւոյն ,
Քաղցրիկ սուլեաց զեփիւռ շուրջն .
“Ա՛յս աւասիկ քեզ ապրուստ ,
Ա՛յս ինձ պարծանք անկորուստ .

Կերա՛յց անոյշ կաթն և սեր ,
Ագա՛յց և զասր աղնիւ ձեր ,”
Այլ ո՛վ յուսոյն սնոտւոյ ,
Կեանք վճարեաց ընդ կերոյ .

Ընդ արօտոյ հօտ նորա
Ձայնիւն 'ի լափ գայլոց տայ .
Քանզի զազան մարդախոշ ,
Գայլակորիւն ջռոմոլոն՝

Ոչխարենի զերբեաւ մորթ ,
Ցանկարծ 'ի հօտ նորա մուտ ,
“Մ՛է ես մանուկ յաձախեր ,”
Կրկնեաց Արին անլեհեր .

“Չեն իրքդ յինէն անծանօթ ,
Ոչ յուսկ իւրեանց՝ ոչ խորհուրդ ,
Ձգժնեայդ գիտեմ զազանաց ,
Գող հռովմայ դերասաստուած .

Ձոր շաղաշուրթ այն վեստեան
Բխջ ծնանէր Մարեխան .
գոռնկութեա՛նց նախամայր ,
կրկնապատիկ արար չար ։

Որ աղարտեաց զԱտրուշան ,
կենդանական ջերմութեան .
Զոր Հայրըն դից և մարդկան ,
Ցայն սրբազան մատուռան ,

Մշտաբորբոք հրդեհէր ,
կենագործել զոգիս մեր ։
նա և զանձն նուիրական ,
Ախտից տուեալ շնութեան .

Պատերազմի քան սիրոյ՝
Ծնող լինի ըրսանաու .
Իսկ մարդախանձ այս կորիւն ,
Որ 'ի գայլուց կաթնասուն ,

Խորհրդաւոր յայն ածեաց
Վայրագասուն ծխապաց ,
Որ 'ի ժանիս միջատող ,
Ցողոյ արեան եկն 'ի լուղ ։

Սա է զաշխարհ կրկնաստեղծ ,
Ըռ անյագուրդ քաղցուն եղծ ,"
"Այո՛ գդա, հայո՜ց հայր ,
Դիտէ արդեան իմ աշխար ,

Որում Արհին ալեոր
Ջ՞օան մատոյց կերակուր :
Հողմ՛ դառնաշունչ ապ՛ յարեաւ ,
Որ ընդ հիւսիս , որ հարաւ :

Օ՛ աղբաբերան զեռնոց տարմ
Զաշխարհ ելից ամենայն .
Զի ո՞ւր Ագդէ , ո՞ւր Լութեր .
Ո՞ւր Գրիգոր , ո՞ւր Վօլթեր .

Որք երբեւ ՚դող ի՞նչ խլուրդ .
՚ի քունջ երկրիս ծակամուտ .
Ապականեալ հեղձուցին ,
Բոյս դալարի՝ զոր գտին :

Օ՛ դեօղ , աւան և քաղաք ,
Եդին ողջոյն աւերակ .
Ցոր որպէս և տեսանես ,
Իբր յանջրդի ապարէգ ,

Հանապազօր կեանք քաղեն՝
՚ի պերճելոյ զոյս գետին :"
"Իրաւ մանուկ, չամաչես,
Որ զոյս ասես, զայն գաղես .

Թէ ո՛չ լսցէր Արարատ
Ձայնքն սիրոյ զանարատ,
Թուլեա՝ Հոմերին ալեոր,
Վարէր ըղձօտն անդանօր :"—

Ուր ինձ զերեան արեգակ,
Գարդեաց ժպտեան անուշակ .
Եւ զյաւիտենից անծանօթ
Լուսեաց ուշոյ զխորհուրդ :

"Տես" ասէ ցիս "Պատանիդ,
Ձատամբ լերանց Արքայիդ,
Լիճ ծովանոյ ձիւնաթուամբ,
Որ հալս հանուր ծծէ յուսմկ,

Օ ականակիտ գետորայ,
Երկրի խմում կապու դա
Թէպէտ խնամք Անմահից,
Փոյթ մեծ տարան զաղետիս,

Մ՝շակ հանել մերթ առ մերթ ,
Փշրել ըղձեան կարծր զփերթ ,
Արդ իսկ բազումք են մշակք ,
Ընդուլք 'ի ջան և վաստակ .

Որք անդադար աշխատին ,
փերթ հատանել բղխատին ,
Սակայն սառին սերմութիւն ,
Սրտիցն ասեմ, դոխ քինուն ,

Ընհալ յարփւոյն շնորհաց ,
Ընդդէմ ճգանց կայ նոցուն ,
գնա և դու ընդ նոսա ,
Վասն հայրենեաց վաստակեա ,

Որ լեցի քեզ տեսանել ,
Թմբոյդ շրջել հիմն 'ի վեր .
Ցայնժամ կրկին հայաստան
Փոխեալ յԱդին փափկութեան ,

Երանարան լինի Ձեզ ,
'ի պոնդոսէ ցգանգէս ."
Այլ խոկութիւն՝ որպէս էր ,
Եանց նոյնպէս և սուեր ,

Ցուցանել թէ աշխարհ այս ,
էր վաղանցուկ իմն երազ ,
ժողովրդեան եղանէ .
Որ ճանաչէ զբարի .

Եւ դու՛ն գործէ միաբան ,
Ըզհետ գնալ գիտութեան ։
Զի գիտութիւն և Աստուած ,
Են սեպհական ստացուած ։

---

ՎԵՐՋ



# ԹՈՒԹԱԿ ԹԱԳԱՒՈՐԱՑ

## ՄԱՅՐԻ՛Կ ԴՈՒ.

ԲԱՐԵՊԱՇՏՕՆ Մայրի՛կ դու,
Բարձա՞ն 'ի քէն բարութիւնք.
Քո՛յ չէ՞ր գոնեա՛յ ձայդ հաւու,
Կամ հինգ դրամ մոմ և խունկ,

Մատուցանել Աստուծոյ,
'ի պատարագ հաշտարար.
Որ զանձնիս մատաղ քոյ,
Զո՛հ նուիրել հաճեցար։

Էջմիածին կարօտ էր,
Քո՛յ հայակեր Մատաղին.
Յորում ետուր ինձ դնել,
Զոյս դալ դատարկ այբ ու բէն։

Ես ո՛վ, մատաղ լինելն ո՛վ,
Զի՞ ինձ ընդ սեռ. և հոլով,
Որով զկեանս ապերջան,
Հողմոյ տուեալ ընդունայն,

Օ՜ իմ պատեցեր օրերով,
Դառն զղսրով և նզով,
Որ ուր երթամ՝ ապերախտ,
Զհետ պնդէ դժնիկ բաղտ։

Օ՛շ թէ էի այր ոդէտ,
Կամ՝ խաշնարած ՚ի դաշտի.
Քան զոր եղայ վարժապետ,
Ցայս տրորիլ դպրոցի։

Ուր չիք դադար և ո՛չ դիւր,
Ո՛չ կիրակի, ո՛չ լի օր.
Ո՛չ դամարձակ ընկերաց,
Եւ ո՛չ խնջոյք ընտանեաց։

Անց ահա՛ վեց ամիս,
Մինչ չանսի բաղանիս,
Հա՛յր Աստուածոց ողորմեա՛,
Ցախտից մարմնոյս խողացա՛յ։

Գիտա՛ունք յինէն ուսարա՛ւք.
Մի՞ յոյժ մնաց ապստամն՝
Կեանըս վարել մեծաշու՛ք,
Ցաշխարհի սաստ փորձութեան,

Օ ի սպառազէն ծնաւ ձեր ·
պաշտպանուհին Աթենաս ·
կեանք ղգլոնոց ցուցանել
Թշուառութեամբք ոլորած ·

---

# ԹՈՒԹԱԿ ԹԱՂԻԴԵԱՆՑ

## ՏՈՒՏՈՒ

ՄՈ՛ՒՏ մեծափառ սրահս դշխոյ,
Ընդելս ՚ի դաս՝ յաւերան բնութեն,
Տե՛ս ո՞ր օրէնք թոյլ տան գերդոյ,
Այսքան սաստիկ ՚նազել, Տուտու.

Ե՞մ ես արդեօք խաղալիկ քոյ,
Որ ՚ի հրապոյր խաբէութեան,
Մտեալ յամուրս հոգւոյ իմոյ,
Կողոպտեսցես ողջ զիս, Տուտու.

Սիրտ իմ գերի տարար գերդոյ,
Կեանս արարեր ստուեր ունայն.
Արդ փրկանակ սիրտ գերւոյ քոյ,
Թէ զիս կամիս՝ ա՛ռ քեզ, Տուտու.

Բէ, տե՛ս սղալ ստաց լեզու,
Զի՞նչ փրկանակ ազատութեան
Արժան լցէ տալ այն գերւոյ.
Որ քո յաւիտն կայ միշտ՝ Տուտու.

Սուր ինձ գերիլ երանութիւն ,
Անտուստ գերէ՞ գնել փութամ .—
Զի՞նչ այս խորին տգիտութիւն ,
Յոր ընկղմես դու զիս՝ Տուտո՛ւ ։

Նման պատուոյ ազնիւ Հօր քոյ՝
Մի՛ խոշտանգեր զիս ընդունայն .
Վիրաց՝ զոր բաց նետ գեղոյ քոյ ,
Զքեզ դարմա՛ն դի՛ր, լա՛ւ Տուտու ։

Բա՛ց կամ զդուռն սրտի իմոյ ,
Յարծաթափայլ ծոցոյդ սեղան .
Զի անդ զկեանս արարից զոհ ,
Սիրոյն և քեզ՝ անգո՛ւթ Տուտու ։

# ԹՈՒԹԱԿ ԹԱԳԼԻԴԵԱՆՑ

## ՍԷՐ ՎՐԻԳԵԱԼ.

Ո՛Վ ԱՇԽՈ՛ՅԺ անմահ խմոյ եռանդեան ,
Դո՛ւ , որ 'ի Դից՝ տուար ինձ ույժ արուեստեան .
Անվեհերել՝ հոգիս 'ի փորձ՝ վերելից ,
Մինչև 'ի կայս Անկարելեաց Բարձրութեան .

Ձիավորեա՛ 'ի թեւս հրեղէն նժուգաց՝
Յարշաւասայր թափանձկութիւն քո մտաց .
Եւ սաւառնեալ 'ի սար լերին Արայեան .
Պաշտեմ խնկով զաստուածուհիս քերթողաց ,

Որպէս զի կայծ անմահ նոցուն շնորհաց՝
Վառեսցէ քոյ զեռանդ հրեղէն անէնչանաց .
'Ի բարձրագոյն նուագս երգոց ամբառնալ ,
Լուսապատար զոյն Գաղափար Սիրուհեաց :

Որ երբեք զակն առաւօտեալ Արեւուն ,
Հարեալ 'ի նոր գեղոյ իւրոյ 'ի փայլիւն .
Կամար կապեաց ընդ համօրէն Հայաստան ,
Ցնդել 'ի բաց՝ զխաւարին մթութիւն .

Երանի թէ՝ ըստ արտաքին գիտակին ,
Զքնազանայր մեհ գիտութեամբ՝ և հոգին .
Պտուղ բերել նմա զգործոց բարութիւն ,
Որով հաղորդ լինէր երկնից վիճակին .

Գլուխ նորա երկնահամբոյր աշտարակ ,
Ուր հսկէր Սէր սպառազէն ապաստակ ·
Զինուորք հերաց նորա զոգիս հայեցկաց ,
Վարժեալ 'ի վեր Տիկնոջ երկնից պատարագ ։

Ճակատ նորա իբրև ամուր անմատոյց ,
Ցունքն աղեղունք , և աչք մառանք են զինուց ·
Որով զինեալ՝ թէ ելանէ մենամարտ ,
Ո՜ կարէ կալ իմանալին հարուածոց ։

Շրթունք նորա , շուշանք անխափ 'ի շնորհ ,
Առատապէս ճնշեն 'ի բաց՝ մեղու ծոր ·
Ո՜վ անուշունց , որ սողոսկեալ 'ի մարմին՝
Զմահացուն ընափոխեն յանմարմին ։

Մտինք սիրոյն՝ կոկոն կոկոն համափիւռ ,
Ցան սանդեաց՝ քերթողութեան ըղշնորհ ,
Զոր թէ քանի՜ ախորժընկալ պատարագ ,
Ընդունէր իւր նորածաղիկ պարգեւեալ՝

Զի՜ փոյթ զայլոց ։—Բայց ինձ թէ դու հաւատաս,
Համարէի ձօն ըղձոսա վերայեաս
Քան զոր բնութիւն սիրեաց մարդկան 'ի պարգև՝
Իւր վանդից թէ և անկեալ սորև ։

Յատուկ սիրոյ Աստուածութեան Արարած ,
Որոյ նման՝ չէք և 'ի հոյլ ոք հուրեաց ·
Եւ հնա՞ր ինչ մահկանացու Քնարիս ,
Միահաղոյն ճառել նորա սքանչելիս ։

Ճառել չիշխեմ ։—Այլ թէ սիրել մեղքնիցեն ,
Ոյր 'ի պաշտօն ծնրի աշխարհ համօրէն ։
Ո՞ր այն յիմարք , որ զնա տեսեալ , չամաչին
Անմտաբար ըղձոյն խորհել տակաւին ։

Զի Րաբունին՝ ինքնակրօն Ղուրանին ,
Թէ տեսանէր զամենագեղ այս լուսին ,
Զսա դնէր Դենի իւրոյ նպատակ ,
Քան թէ զՀուրիս , որք են սորա աղախնեայք :

Սիրո՛ւն էր սա , քան զդրախտն Ադենի ,
Այլ պաշտիւր միշտ՝ ՚ի տաճարին կոյր Բաղդի .
Ուր թէ և խուռն ընթանային ուխտաւորք ,
Այլ ոչ առանց չարչարանաց և խաչի :

Անարգիցէ՞ թէ ունիցի՝ վարդ զփուշ .
Կարէ՞ վտանգ զպակել զսէր ապաժոյժ .—
Մի՛ հաւատար : Զի ոչ մարդիկ , այլ և Դիք
Զկեանս անգամ վճարեցին սիրոյ տոյժ ,

Յորոց Ասոն ՚ի Վասանտեանն Ասինայ ,
Սան ՚ի սարէ Եղիմականն Ուրաղայ ,
Իսկ Թրաքսիդոն յԱզատ լեռնէն ՚ի Մասեաց ,
Հազարամեան (աշտ արարին Հաշտինայ :

Ուր զառաջինն յանդգնութիւն Տիտանեանց ,
Զաստուածամարտ խռովութեան բուրգն ամբարձ .
Ի՛ւ փլածայս նորա թաղեալ միութիւն ,
Ծնաւ յաշխարհ զանմիութիւն մայր չարեաց :

Անդ ՚ի խոհերս հրայրեցին Խառանայ ,
Դնէր զժոխ բղջախոհին Աստարտայ .
Զոր բորբէր միշտ զօտին հրեղէն ՚ի բարձանց ,
Յորդ հոսելով ՚ի նա զկարկուտ կայծականց :

Անտի ընաւ տակառափոր մեզ Բեղան ,
Անհռելի ճիւաղն ասեմ , սոսկագոյն ,
Ոյր լայն բացեալ զդժոխային զիւր բերան՝
Ծծէր ՚ի ներս ունայնութեան զէս համայն ,

Այլ այն ինչ գետ 'ի կոկորդին կէս կլեալ,
Համահարթան ու մեղ աշխարհիս վայր երթայր ·
Անման Քաղցուն ձգեալ զձանկն եռաժան ,
Ջրուս ագեաց Նորա համբուն աւար առ ։

Ուստի ցցեալ գալարածոյս թաւ տոան ,
Խրթև Նշան գագանային բարկութեան ·
Վաիր եհմր , Սանդարամետք սարսեցին ·
Թնդայ · Լաղեք Պղոտնի հալեցան ։

Ուստի իշխանք և պետութիւնք Անդնդոց ,
Որք տիրէին բիւրաշխարհեան կալուածոց ·
Իւրաքանչիւր ըստ բարձու իւրում պաշտաման,
'Ի գլուխ եդեալ զմտկաանին շանթահոս ,

Եւ հեծուցեալ 'ի կատաղին Արգաստես ,
Փոթորկեցան օրհասական ընծու պէս ·
Հատան 'ի բաց զէտ կայծակունք յերկաթոց ։
Որք Հեփեստեայ ուռան առին քաջ զփորձ ։

Եւ մինչ կէս մի փայլատակէր 'ի Նախանձ ,
Կէս զայրացեալ փնչէր զօրէն մեշապանց ·
Եւ ջոկն ողջոյն ըստ ագռաւուց սոլելոց՝,
Կռայր զեւր յունկն ունայնութեն ջայլ ցաւած ։

Յո՛րն յարեաւ մեծ Տիտանեան Վիթխարին ·
Նա՛ որ անուն ունէր սատան Ճշմարտին ,
Եւ լեռնօրէն դիզեալ զգիտակն այլանդակ՝
Ելից զվայր համածաւալ անդնդին ,

Ապա հանեալ զօձանման իւր լեզուն ·
Բանս առ 'ի մէջ աստուածընդդէմ Բանսարկուն
Եւ կարկամեալ 'ի կոկորդին կապուտակ՝
Ժայթքեաց 'ի բաց ըղթոյն որտին՝ մյա զունակ ,

“Գաղտնի՛ ոգիք խաւարային անդնդոց,
Արի Տիտանք՝ անտարք ահից Աստուածոց,
Որք բռնաւոր ինքնեղութեամբ երազեն,
Ահ արկանել այսոց՝ իբրև տղայոց ։

Տեսէք, զի՞ Դիք, իբրև եղինք ի մի լուծ,
Սորկեցին մահկանացուին պարանոց ․
Եւ ջերմեռանդք զիրթ մոխրապաշտ Դէնմազդէս
Զկեանս իւրեանց տան Հաշտենայ ողջակէզ ։

Մարտա՛ն կարդամ ես Դիւցազանց այսպիսեաց,
Որք Դժոխոց յայտ արարին զչար իւրեանց ․
Թող արդ ունիքեանք զչար այսոց գիտասցեն,
Զմեզ իշխան ճանաչելով հեշտութեանց ։

Բայց զի չարին չիք ընդ բարւոյն միութիւն,
Մէ՛ Դիւցազանց հաղորդ լիցի՛ Դիւազուն,
Եւ մի՛ Դստեր հեշտասէրին Վինուսայ
Հուպ եկեսցեն Սան և Ասն, Թրաքսիզոն ։

Ցայգըն սրոց, և քաջութեանցն ի Նախանձ,
Ես զԲեղուն ճիւաղ վհիս մարդախանձ,
Լցեալ զանձու եղից սիրոյ Հաշտենայ՝
Եւ ընտրութեան ծնողաց Նորա՝ առարկայ ։”

Զայս ասաց նա, Դևք վառեցան ի Նախանձ,
Դղրդեցին զդրանդիս յաւիտեանց ․
Եւ ի վերայ յամբաղանդագ Կրայի՝
Մեղկ թուլութեան պղերգութեան զուշակի ։

Մանկմասաստն ալի՜ք պարանեալ զԲեղոն,
Ճիւաղն ի ճեռ փոխարկեցին ճախազոյն ․
Եւ յանդիման Հօր Հաշտենայ կացուցին,
Իբր անհման Նորուն փեսայ՝ լատ ըղձին ։

ԲԱՅՑ արդ տուր քեզ՝ կարդամ Մուզայդ երկնային ,
Իմանալի լուսոյն ծնունդ ծոցածին .
Որ սփածեալ զանտարբերական անձամբ քով
Ցանշամանդաղ մասանց ցոյ՝ զմարմին ,

Պարայածիս 'ի լուին թաւս անտառաց ,
Բորբեալ սիրով սառուցեալ սիրս քերթողաց .
Ոյք ընկերեալ մոռացութեան՝ մենութեան՝
Կան և կառին զօրէն անշարժ արձանաց :

Մինչև տեսցեն ըզքեզ զինու յաղթութեան ,
Աստուածառաք՝ եկեալ ինքեանց օգնական .
Վանել ուռամբ որոտընդոստ շանթի քոյ :
'Ի մտաց իւրեանց զՔիմեռայս ուրուական :

Ի 'ի քեզ , որ ես Հանդիսարան պատկերաց
Գերատեսակ գեղոյ համայն գոյութեանց .
Նկարելով ուշոյ նոցա զոր սիրուն՝
Առնել զործոց վեհ բնութեանց երգեհոն :

Եւ զիս—ով զիս , ուսո՛ Ոգիդ աստուածեան .
Ջհաշտենայ ողբալ զելըս կորստեան ,
Զոր ցանկայի զէտ մարգարիտ անսազիւտ ,
Պահել յաւէժ 'ի տուփ սրտիս անկորուստ :

Ա՛ս , հեմ զեղ և թշնամի իւր ինքեան ,
Ցուսահմայ ջաղուն անյոյս կորստեան ,
( Որ տածէ յայլս նախանձ և հեռ , քան թէ սէր ,
Ցինքեան՝ միայն զկուրութիւն ընտրութեան ,)

Հրապուրեաց զմիտս ամբիծ աղաւնւոյն , ,
Արհամարհել ընդ Դիւցազանց միութիւն .
Եւ զհանդերձեալ զեզ քան զմին զեւր պսակ ,
Ընդ արծաթոյ փոխանակել , զգխտութիւն :

Եւ կամ զեմրդ անդաստան սիրուհին ,
Ունկն մատոյց դժոխայուր Պատրողին ,
Ի ընդ անմահից՝ անմահանալ խոտելով՝
Գիրկս ակամայ ած ոսկեբարձ գրաստին ․

Չեւ էր Կրօն Նախաշխարհիկ ծերունին ,
Ակնապարար ակն Արեւու , կամ լուսին ,
Չեւ իսկ Արգոս հարիւրաչեան պահ երկնից ․
Տեսեալ երբէք՝ զարմանս այսքան անքնին ,

Զի ո՞վ կարծէր թէ առարկայն սիրոյ դից ․
Բիրտ Բեղունն պիտի լինէր կենակից ․
Կամ ո՞վ թուէր թէ կոյսն այնքան երկնային ,
Փողոյ պիտի ծախէր զաշխոյժ հասակին ․

Սակայն արար—կոյր անընչանաց արժանին ,
Զարհամարհան—սրն վառարան իւր խղճին ,
Ուր մնանէ իբր 'ի խարոյկ դագաղաց ,
Հանապազօր ողջակիզեալ ըղձոցին ․

'Ի կարծեցեալ երջանկութեան՝ ապերջան ,
Նստի թաղեալ՝ համակ 'ի թոյլ թախծութեան
Թո՛ղ արամբի , այլ զէտ այրի մնաւոր ,
Լայ և ողբայ վասն իւր անգիւտ կորստեան ․

Զի ընդ առաւօտ—ըս յառուցեալ վարդորդեայն ,
Խնկէ 'ի վեր զվէտ առ վէտ խէժ զղջման ,
Այլ զո՛ւր նորա անմեղութեան պատրուակ ,
Երբ Դիք չեն հաճ ընդ զողունին պատարագ ․

Որ ետ այլում սիրտ զկայան զղջութեան ,
Զղջալ նորա է ազգակից զողութեան ․
Որ զողացեալ զերբս անդոյ օտարին ,
Պատարագէ որոց օտար է ինքնին ․

ԱՅՍՊԷՍ աւուրք երանութեան մեկնեցան,
Յանկարծ ՚ի դարս յաւիտենից թաղեցան.
Եւ Հաշտենա թէ ակամայ՝ թէ կամայ,
Ընդ սեաւ քօղով ստորանկեալ Հիմենայ։

Ուսաւ ՚ի դառըն պսակոյն փորձութեան,
՚Ի միտ առնուլ զյարգ Դիւցազանց, թէ ո՛րքան.
Եւ հուսկ ուրեմն մորմոքելով նուաղեաց
Թէ՝ "տրտմութիւն էր վրիպումն ցանկութեանց։"

"ԱՒԱՂ կարդամ հազա՛ր անգամ, մինչ յիս գամ,
Թէ էր ծնողք այսօրինակ նանրացան.
Մինչ զինքնայոյս արեգակամբ քամահել,
Եւ զիս Աստղիկ ընդ Բեղոնի շաղկապել։

Հատանելով ՚ի սուրբ դրկացն անմահից,
Զիս մարգարիտ տալ առաթուր գէր խոզին,
Ոսկի ունի՛, ծուլեսցէ թո՛ղ յիւր կոկորդ,
Իշացլուն Միդասայ էր այդ անձկոյթ։

Կո՛յր Հայր, կո՛յր մայր,—ա՛խ և դու բա՛ղտ դաւաճացու,
Զիա՛րդ զկեանս իմ արարիք ոսկւոյ զոհ,
Կարե՛ն արդ ձեր հալանք և հանք պսպղունք,
Պատասխանել աշխուժանաց վեհ սիրոյ։

Ընչաքաղց Հօր ագահութեամբ ժողոված
Հարստութիւն լիու զանդե՛ն պարծանաց.
Կո՛յր ընտրութիւն. յորժամ զող գայթ գողանայ՝
Յայնժամ խպառ յոյս քո չուառ ննանայ։

Հո՛ղս իւր գլխոյն—ահա՛ հարուստ է Բեղոն,
Բայց սեւս կարէ կառավարել մի՞ ըղնոյն.
Ոսկեհավետ այս յաւանակ անօպայ,
Որ քանի՛ կայ, քանի՛ մնայ՝ իշանայ։

Ա՛ռ դու զՀամեստ, քա՛րձ զնորա ճոխութիւն,
Փոխի՛ վիճակն, ինքն էշ մնայ մի և նոյն.
Ընդ անարգանս և ընդ արգանս չիք միջոց,
Ծա՛յրք են նմա՝ գահ արքունի, կամ աղբիւս:

Ցակառափոր բլուր իմն է մնային,
Որում աստուած է որովայն զազրատին.
Ջորմէ հոգայ, զորով միայն պատաղի,
Ոչ գիտելով զինչ այրն իցէ՝ և զինչ կին:

Ուր պարարէ անասնարար զայս իւր փոր,
Ընդ և խորդայ մեռօրինակ 'ի քուն խոր.
Չըզգայ ընաւ թէ ո՛ւր, զի՛արդ, կամ ընդ ո՛ւմ,
Անցուցանէմ զերկարութիւն գիշերոյն:

Դո՛ւք ապաքէն՝ վերացարո՛ւք պատկառմո՛ւնք,
Որդխապարտք մեկնեցարո՛ւք մեծարանք.
Եւ դուք ծնո՛ղք, որք կորուսիք ըզգօրով,
Կորնչիցե՛ք ոսկւով ձերով 'ի Սեաւ ծով:

Քա՛ն Դարուգոյ՝ բոլորովք բռնաւոր,
Քա՛ն փաղարէս՝ որ հրակէզն, արար ցուլ.
Անագորոյն և չարաչար գոյք յիս,
Արկանելով յայս մշտայրեաց բով խղճիս:

Չէ՛ օր մի մարդ. ո՛չ ամիս մի, և ոչ ամ,
Կարացից ըստ չարիս տանել յաւիտեան.
Չի՛ք այլ հնար ազատութեան եղկելոյս,
Մահու միայն տալ աղիտիս ըզվախճան:

Թէ չէ՛ր տեսեալ իմ զարկինին Թրաքսիղոն,
Կամ վայելեալ զկաթողին սէր Նարուն՝
Այսքան 'ի խոր չազդէր յոգիս ապաշաւ.
Որ լոյս թողի, խաւարն առի՝ ընտրանաւ:

Ա՜․ օր սուրբ ա՜հ ։ Քանի՜ ՚ի խոր ազդեցիկ
Դրոշմ հետոյդ երանութեան յոգի մեր ,
Յորում անհոգ գլուխ ՚ի գոգ հանգուցեալ ․
Ներդաշնակէր ունկան իմում զիւրըն սէր ։

Քանի՜ սիրուն երամք հաւուցն երգեցկաց ,
Ծառք և ծաղկունք և արձագանգք արձանաց ,
Ձայնակցելով հրեշտակային քնարին ,
Սողոսկէին ՚ի լուր հիւքոյս զմայլանս ։

Այլ ամք կեցին յանբաւութիւնս յաւիտեանց ․
Յեղյեղեալքն կարգք համօրէն բնութեանց ․
Դարձցի՜ Զրուան անդրէն ՚ի տիս մանկութեան ,
Սկսանել զիւր նորատեղծ Յոբելեան ։

Մինչ զգայցի միւսանգամ Հաշտինս ,
Զզայութիւն յանձն իւր այնքան գերակայ ․
Զի անմարթ է ընկղմելոյս ՚ի մարմին ,
Շնչել ըղձիւք իմանալեաց ձարին ։”

ԱՅՍՔԱՆ զունակ՝ աչացն ՚ի ցօղ ոսկեփունջ ,
Զեղոյր ՚ի Լէթ․ մոռացութեան զիւր մրմունջ ,
Զի կոյք և գեղ , առանց գործոց բարութեան ,
Անյիշատակ գնան ՚ի վիհ կորստեան ։

Լայր , ՚ի յուսոյն և հատանէր Հաշտինս ,
Մինչև յիշեաց դաշն իւր գրուժ՝ սատանայ ․
Եւ առաքեաց առնա յանկարծ պատառ գունջ ,
Օձագիսակ ընդդայն սեւմ դառնաշունչ ։

Յոր ՚ի դիմաց հատանէին արհաւիրք ,
Եւ ՚ի շրթանցըն շողոքորթք և պատիրք ․
Հրապուրել զերբեմն ընտիր սան երկնից ,
Խոր ՚ի խոհերս դժոխային աղետից ։—

Ո՞վ թէ բարի ինչ վարկուցեալ զիմըն բան ,
Գերալուսին Հրեշտակուհեացն Արամեան .
Բերցեն անձանց զոյգ ընդ զերդոյ արտաքնոյն,
՚Ի զարդ ներքին մարդոյ զվեհ գիտութիւն ։

Եւ ընտրեսցեն յամուսնութիւն զայր գիտուն ,
Որ կարիցէ բարւոք խնամել զիւրեանց տուն .
Նա զերաւունս Ամուսնութեան համարել ,
Յետ Աստուծոյ՝ իբր առաջին իւր պաշտօն ։

Եւ յիշեսցեն ՚ի բարութիւնս իւրեանց մեծ ,
Զկաթողին բարեաց իւրեանց՝ բանաստեղծ .
Որ առ ՚ի խրատ , քան ՚ի պանծատ զՀաշտինայ ,
Զվերիպեալըն նուագեաց սէր՝ այսպէս ։

# ԹՈՒԹԱԿ ԹԱԳՈՒՀԵԱՑ

## ՀԻՄԷՆ

Ձեր հարսանիք
Եղին երկինք,
Մեր հայրենեաց,
Նաւակատիք.
Ո՛վ սիրասունք, ո՛վ ուրախ զոյգ՝
Ո՛վ ուրախ, ո՛ւրախ երկուք.

Տարաշխարհիկ
Շրջեալ մանկիկ,
'Ի կոյր բաղտէ,
Տանջեալ հերիք,
Ո՛վ սիրասունք.

Արդ երջանիկ.
Հարսինդ 'ի գիրկ,
Իբր յԱդինի,
Հանգիր քաղցրիկ,
Ո՛վ սիրասունք.

Մ՛ի երկնչիք,
Ես ձեր հիւրիկ
գինդ կապեցի,
Խղճել հնար չէք,
Ո՛վ սիրասունք ։

Զ՛ի ոչ ատիք՝
Ո՛չ ստորինք,
Ո՛չ անողորմ,
՛Նոցա չարիք,
Ո՛վ սիրասունք,

Լիցին հերիք,
Թէ և դժնիք,
Սիրոյն սրբոյ,
Եղծուլ կնիք ։
Ո՛վ սիրասունք,

Թ՛ող մեր հրճուիք
Ձեր երջանիկ,
կենաց լիցին,
Միշտ արգասիք,
Ո՛ սիրասունք ։

ՎԵՐՋ.